Հավելված
ՀՀ կառավարության 2008թ.
հունիսի 12-ի նիստի N23
արձանագրային որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ

Ներածություն

Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակվել է 1988 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների ծրագրի հիման վրա և ուղղված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N380-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012թթ. ծրագրի դրույթների ապահովմանը:

Հայեցակարգի նպատակը՝ նախկինում ընդունված որոշումների համաձայն իրականացված բնակարանային ապահովման ծրագրերի վերականգնողական աշխատանքների վերլուծության արդյունքներով պետական քաղաքականության սկզբունքների ձևավորումն է՝ ուղղված մինչև 2013 թվականը երկրաշարժից 20 տարի անց դեռևս անօթևանի կարգավիճակում գտնվող անձանց բնակարանային խնդիրների լուծմանը:

Հայեցակարգը հիմք է հանդիսանում աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակման համար:

Բաժին 1.Ներկա վիճակի վերլուծություն

1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժը ընդգրկեց հանրապետության տարածքի շուրջ 40 տոկոսը՝ մոտ 1 մլն. բնակչությամբ:

Երկրաշարժի հետևանքով ավերված կրթական, առողջապահական, արդյունաբերության, կապի, տրանսպորտի և այլ նշանակության մեծաքանակ օբյեկտների հետ մեկտեղ քանդվեց կամ տարբեր աստիճանի վնասվածություն (II-IV աստիճան) ստացավ 8,9 մլն քառ.մ ընդհանուր մակերեսով բնակարանային ֆոնդը, այդ թվում՝ 4,1 մլն քառ.մ պետական և 4,8 մլն քառ.մ անհատական:

Երկրաշարժի հետևանքների վերացման՝ հատկապես անօթևան մնացած ընտանիքների բնակարաններով ապահովման, հարցերը միշտ գտնվել են իշխանության ուշադրության կենտրոնում և այդ ուղղությամբ ընդունվել են մի շարք որոշումներ և իրականացվել են ծրագրեր:

1989-2000թթ. ժամանակահատվածում աղետի գոտու վերականգնմանն ուղղված ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված ծրագրերի շրջանակներում գործարկվել են 3.6 մլն.քառ.մ ընդհանուր մակերեսով բնակելի տներ (կամ 45 հազ. բնակարաններ/ բնակելի տներ) և 2001 թվականի օգոստոսի 15-ի ՆՀՕ-203 ՀՀ օրենքով հաստատված աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում 2001-2007 թթ. իրականացված միջոցառումների շնորհիվ մոտ 13 հազ. ընտանիքներ բարելավել են իրենց բնակարանային պայմանները:

Ընդ որում, սոցիալ-տնտեսական ազդեցության տեսանկյունից պետական միջամտության շրջանակներում անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերից կարելի է առանձնացնել աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը, որպես համալիր մոտեցումների՝ տնակային տնտեսություններից տարածքների հիմնավորված ու հաջորդական մաքրման և զուգահեռ այդ տարածքներում առկա խնդիրների լուծման սկզբունքի կիրառմամբ իրականացված ծրագիր:

2001-2007 թթ. ընթացքում համալիր ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկանքը բերված է N1 աղյուսակում:

Համալիր ծրագրի իրականացման վերլուծության արդյունքների ամփոփումով կարելի է փաստել, որ ծրագրով նախատեսված աջակցության տրամադրման սկզբունքների համաձայն իրականացված միջոցառումների շնորհիվ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պարտավորությունները հիմնականում կատարված են:

Սակայն, չնայած շարունակաբար իրականացված աշխատանքներին, աղետի գոտու բնակավայրերում՝ հատկապես Գյումրի քաղաքում, դեռևս պահպանվում է բնակարանային պահանջարկի բարձր մակարդակ: Այսպես, աղետի գոտու բնակավայրերում 2008 թվականին իրականացված վերահաշվառման գործընթացի արդյունքներով երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների թիվը կազմում է՝

ա) քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ) բնակավայրերի պետական սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած՝ 5366, որոնցից 4002-ը Գյումրի քաղաքում և 250-ը՝ նախկին տարածաշրջանների քաղաքատիպ բնակավայրերում (ՀՀ Շիրակի մարզի գ.Ախուրյան, ՀՀ Լոռու մարզի գ.Գուգարք, ՀՀ Արագածոտնի մարզի գ.Ծաղկահովիտ):

բ) գյուղական բնակավայրերի անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած՝ 2329:

Արդյունքում, համապատասխան համայնքների ղեկավարների կողմից 2008 թվականի մարտի 1-ի դրությամբ հաստատված ցուցակների համաձայն հաշվառված են **7695** երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներ: Ամփոփ տվյալները ըստ մարզերի բերված են N2 աղյուսակում:

Երկրաշարժից հետո անցած 20 տարիների ընթացքում աղետի գոտու բնակավայրերում վերականգնողական աշխատանքների իրականացման արդյունքում և ներկայիս սոցիալ-տնտեսական իրավիճակում դեռևս պահպանվող բնակարանային պահանջարկի բարձր մակարդակը ևս նոր հարցադրումներ է առաջադրում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակապահովման քաղաքականության հստակեցման՝ ճշտված տվյալների հիման վրա բնակարանային խնդիրների լուծման առաջնահերթությունների, ուղղությունների և երաշխիքների սահմանման միջոցով:

Բաժին 2. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման առաջնահերթությունները

Ելնելով այն հանգամանքից, որ առկա են լրացուցիչ ուսումնասիրման և առանձնահատուկ քննարկման ենթակա այնպիսի խնդիրներ, ինչպիսիքն են ՀՀ օրենքով հաստատված աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրով ձևավորված պարտավորությունների համաձայն մինչև ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 11-ի N701 որոշման ընդունումը նախկինում զբաղեցրած բնակարանի չափից ոչ պակաս չափով բնակարան սատացած և տնակներում բնակվող (ք.Գյումրի՝138), ինչպես նաև քաղաքային բնակավայրերում, այդ թվում՝ Սպիտակ քաղաքում, անհատական բնակարանային ֆոնդում տուն կորցրած ընտանիքների բնակապահովման և ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած, տնակներում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հարցերը, **ներկա փուլում առաջնահերթ կարգով** պետական աջակցության շրջանակներում առաջարկվում է անդրադառնալ հետևյալ ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանը՝

-աղետի գոտու բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած, սահմանված կարգով հաշվառված այն ընտանիքների, որոնք և որոնց ընտանիքների մի մասը նախորդ տարիներին իրականացված աղետի գոտու վերականգնման ծրագրերի շրջանակներում չեն ստացել բնակարան նախկինում զբաղեցրած բնակարանի (սենյակների թվով) չափով:

-գյուղական բնակավայրերի անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած ընտանիքների:

Վերը նշված առաջնահերթության մոտեցումների կիրառմամբ համապատասխան համայնքների ղեկավարների կողմից 2008 թվականի մարտի 1-ի դրությամբ հաստատված

ցուցակների համաձայն առաջնահերթ կարգով բնակարանային խնդիրների լուծման ենթակա երկրաշարժի հետևանքավ անօթևան մնացած ընտանիքների թիվը կազմում է **6985,** որոնցից՝

ա) քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ) բնակավայրերի պետական սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած՝ 4656, որոնցից 3864-ը կամ ընդհանուր թվի 83%-ը Գյումրի քաղաքում և 250-ը՝ նախկին տարածաշրջանների քաղաքատիպ բնակավայրերում (ՀՀ Շիրակի մարզի գ.Ախուրյան, ՀՀ Լոռու մարզի գ.Գուգարք, ՀՀ Արագածոտնի մարզի գ.Ծաղկահովիտ):

բ) գյուղական բնակավայրերի անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած՝ 2329:

Ընդ որում, 6985 ընտանիքներից 2055-ը կամ 29%-ը մեկ-երկու անձից կազմված ընտանիքներ են: Ամփոփ տվյալները ըստ մարզերի բերված են N3 աղյուսակում:

Հաշվի առնելով ժամանակի մեջ հաշվառված ընտանիքների թվի հնարավոր փոփոխությունները, ՀՀ կառավարության կողմից երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների նկատմամբ բնակարանային խնդիրների լուծման ստանձնած պարտավորությունների հստակեցման նպատակով անհրաժեշտություն է առաջանում որոշակի սահմանափակումների կիրառման՝ մասնավորապես. բնակարան ստանալու իրավունքից օգտվող քաղաքացիների վերահաշվառման վերջնաժամկետ սահմանելու առումով՝ մինչև 2008թ. նոյեմբերի 1-ը:

Դրա հետ մեկտեղ, նպատակ ունենալով ի հայտ բերել այն համայնքները, որոնք պետք է դիտարկվեն որպես պետական աջակցության առաջնահերթություններ, գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված ծրագրերը իրականացվելու են տարածքային մոտեցման՝ յուրաքանչյուր համայնքում առկա բնակարանային խնդիրների ամբողջական լուծման սկզբունքի կիրառմամբ: ՀՀ կառավարության կողմից կսահմանվեն տարեկան ծրագրերում ընդգրկվող համայնքների ընտրության չափանիշները՝ ըստ յուրաքանչյուր համայնքի ընդհանուր խոցելիությունը բնութագրող ինտեգրալ ցուցանիշի մեծության:

Բաժին 3. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման ուղղությունները

Հայեցակարգով առաջարկվում է մինչև 2013 թվականը առաջնահերթ կարգով լուծման ենթակա անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հետևայլ ուղղությունները.

3.1. Քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ) բնակավայրերի պետական սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած ընտանիքների բնակարաններով ապահովման գործընթացը առաջարկվում է իրականացնել՝

3.1.1 ֆինանսական աջակցության տրամադրմամբ՝ շուկայից բնակարան ձեռք բերելու համար:

Այս ուղղության կիրառմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կշարունակի իրականացնել բնակապահովման գործընթացը բոլոր բնակավայրերում, բացառությամբ Վանաձոր, Մարալիկ, Դիլիջան քաղաքների և Ախուրյան, Գուգարք ու Ծախկահովիտ գյուղերի, որտեղ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրները լուծվելու են միայն բնակարանների գնման ծրագրերի իրականացմամբ:

3.1.2 Անավարտ շինարարության բազմաբնակարան շենքերի ավարտմամբ՝ ավարտելով ինչպես քաղաքաշինական, այնպես էլ տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից առանձնացված շենքերի շինարարական աշխատանքները:

Առանձնացված անավարտ շինարարության բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքների ավարտման վերաբերյալ վերջնական որոշումը կայացվելու է ելնելով շենքերի տեխնիկական վիճակի հետազննման արդյունքներով:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտություն է առաջանում նաև անավարտ շինարարության բազմաբնակարան շենքերի վերանախագծման, քանի որ ըստ նախագծային լուծումների մեկ բնակարանի մակերեսը գերազանցում է մեկ ընտանիքի հաշվով շինարարական նորմերով առաջարկվող բնակարանների նվազագույն մակերեսները: Մեծ չափով նախագծված բազմաբնակարան շենքերի բնակարանների ընդհանուր մակերեսի կրճատման և ըստ բնակարանային պահանջարկի վերանախագծման ճանապարհով հնարավորություն կընձեռվի լրացուցիչ բնակարանների հանձնման՝ մինչև 20 տոկոս:

3.1.3 Բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում նոր բազմաբնակարան շենքերի կառուցմամբ:

Նոր բազմաբնակարան շենքերը կառուցվելու են համապատասխան համայնքների հաստատված հատակագծերի համաձայն նախապես առանձնացված կառուցապատման տարածքներում՝ հաշվի առնելով կոմունալ-կենցաղային և սոցիալական ենթակառուցվածքների ու տրանսպորտային ուղիների առկայությունը և մատչելիությունը:

Բնակարանային շինարարության (անավարտ կամ նոր) ծրագրերի շրջանակներում նախատեսվում է լուծել Գյումրիում՝ 3000, Սպիտակում՝ 180 և Ստեփանավանում՝ 48 երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրները: Ընդ որում, շինարարական աշխատանքների ավարտման արդյունքներով շահագործման հանձնված բազմաբնակարան շենքերի բնակարանները հատկացվելու են սահմանված կարգով հաշվառված անձանց՝ ըստ ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N432 որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետով սահմանված հերթականության:

<u>3.2. Գյուղական բնակավայրերի անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած</u> ընտանիքների բնակարաններով ապահովման գործընթացը առաջարկվում է իրականացնել՝

ա) *անավարտ շինարարության բնակելի տներ ունեցող ընտանիքների* բնակարանային խնդիրները՝ անավարտ բնակելի տների շինարարական աշխատանքների ավարտման միջոցով:

Ավարտման ենթակա շինարարական աշխատանքների ծավալները որոշվելու են ելնելով ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի N 309-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով սահմանված նորմերով ընտանիքին (անձերի թվով) հասանելիք բնակարանի (սենյակների թվով) ընդհանուր մակերեսից:

բ) *անավարտ շինարարության բնակելի տներ չունեցող ընտանիքների բնակարանային խնդիրները՝*

- ֆինանսական աջակցության տրամադրմամբ՝ ֆիքսված գումարի շրջանակներում ըստ ցանկության շուկայից բնակելի տուն (բնակարան) ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու համար:

- բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում նվազագույն ստանդարտների համապատասպանող նոր բնակելի տների կառուցմամբ:

Գյուղական համայնքներում առաջին ուղղությամբ բնակապահովման գործընթացը իրականացնելու դեպքում հաշվի է առնելու գյուղի բնակչության արտահոսքը չխթանելու հանգամանքը: Այսինքն, հաշվի է առնվելու յուրաքանչյուր համայնքում անօթևան ընտանիքների թիվը և վաճառքի ենթակա բնակելի տների քանակը:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է տարբերակված մոտեցումներ ցուցաբերել գյուղական բնակավայրերում անօթևանների բնակապահովման հարցի լուծման ուղղությունների կիրառման մասով: Մասնավորապես. մինչև 25 անօթևան ընտանիքով համայնքներում կիրառել միայն բնակելի տների գնման տարբերակը, 25–100 ընտանիքներ ունեցող համայնքներում՝ բնակելի տների գնման և նոր բնակարանային շինարարության ու 100-ից ավել ընտանիքներով համայնքներում՝ միայն նոր շինարարության տարբերակը: Ընդ որում, տարբերակների որոշման ժամանակ հաշվի է առնվելու անօթևան ընտանիքների կազմը:

Գյուղական բնակավայրերում բնակապահովման խդնրի համար նոր լուծում կարող է հանդիսանալ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող շինարարական ժամանակակից տեխնոլոգիաները՝ կարճ ժամանակահատվածում և ավելի ցածր ինքնարժեք ունեցող այդ տիպի շինարարության տեխնոլոգիաները, որոնք կանցնեն բոլոր քաղաքաշինական և այլ կարգի փորձաքննությունները և կհաստատվի դրանց օգտագործման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության երկրաշարժից տուժած տարածաշրջաններում:

Աղետի գոտու բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կդիտարկվեն նաև միայնակ մեծահասակների բնակարանային խնդրի լուծման համար սոցիալական բնակելի տան կառուցման հարցերը: Ընդ որում, «սոցիալական բնակելի տան» կառուցման ծրագրերի շրջանակներում դիտարկվելու են ոչ միայն մեծահասակների բնակապահովման խնդիրները, այլ նաև այն որպես այնպիսի մի ենթակառուցվածք, որը ենթադրում է նոր աշխատատեղերի ստեղծում և համալիր ծառայությունների մատուցում:

Հարկ է նշել, որ այն բնակավայրերում, որտեղ Հայեցակարգով բնակարանային խնդիրների լուծման համար նախատեսվում են մեկից ավելի ուղղություններ, դրվելու է կամավորության սկզբունքը՝ ընտանիքը կարող է ընտրել պետության կողմից առաջարկվող տարբերակներից որևէ մեկը:

Բաժին 4. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման համար անհրաժեշտ միջոցների գնահատականները

Ըստ խոշորացված հաշվարկների Հայեցակարգով նախատեսվող սկզբունքների համաձայն 6985 ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ծախսերի ծավալների կողմնորոշիչ գնահատականները կազմում են 77.6 մլրդ դրամ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված 1,315 մլրդ.դրամ հատկացումների հաշվին կանխատեսվում է լուծել 202 ընտանիքների բնակարանային խնդիրները, որոնցից 101 ընտանիքներինը՝ Գյումրի, Վանաձոր, Ստեփանավան և Դիլիջան քաղաքներում և 101 ընտանիքներինը՝ ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության ծախսային ծրագրի համար նախատեսված 815.0 մլն. դրամ հատկացումների սահմաններում:

Արդյունքում, սկսած 2009 թվականից մնացած 6783 ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման համար կպահանջվի 76.3 մլրդ.դրամ (կամ տարեկան 11.2 մլրդ դրամ), որոնցից ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով՝ 8.2 մլրդ. դրամ և բնակարանային շինարարության ծրագրերի իրականացման միջոցով՝ 68.1 մլրդ.դրամ:

Ընդհանուր ծավալից՝

<u>ա) քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ) բնակավայրերի պետական սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած ընտանիքների</u> 4555 ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման համար կպահանջվի 49.7 մլրդ դրամ կամ մեկ ընտանիքի հաշվով 10.9 մլն.դրամ չափով գումար:

Բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած 4555 ընտանիքներից՝

-1327 ընտանիքների բնակարանային խնդիրները նախատեսվում է լուծել բնակարանների գնման միջոցով, որի համար կպահանջվի 6.6 մլրդ.դրամ կամ մեկ ընտանիքի հաշվով՝ 5.0 մլն.դրամ.

-3228 ընտանիքների բնակարանային խնդիրները նախատեսվում է լուծել բնակարանային շինարարության (անավարտ կամ նոր շինարարություն) ծրագրերի շրջանակներում, որի համար կպահանջվի 43.1 մլրդ.դրամ կամ մեկ ընտանիքի հաշվով՝ 13.3 մլն.դրամ:

<u>բ) գյուղական բնակավայրերում անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած</u> 2228 ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման համար կպահանջվի 26.5 մլրդ.դրամ, կամ մեկ ընտանիքի հաշվով 11.9 մլն.դրամ չափով գումար:

Անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած 2228 ընտանիքներից՝

- 419 ընտանիքների բնակարանային խնդիրները նախատեսվում է լուծել բնակարանների (բնակելի տների) գնման միջոցով, որի համար կպահանջվի 1.53 մլրդ. դրամ կամ մեկ ընտանիքի հաշվով՝ 3.6 մլն.դրամ: Դա այն ընտանիքներն են, որոնք չունեն անավարտ շինարարության բնակելի տներ և գյուղական

բնակավայրերում անօթևանների բնակապահովման հարցի լուծման ուղղությունների կիրառման մասով նախատեսված տարբերակված մոտեցումների համաձայն ընդգրկված են մինչև 25 և 25 – 100 անօթևան ընտանիք ունեցող համայնքների խմբերում:

- 1809 ընտանիքների բնակարանային խնդիրները նախատեսվում է լուծել բնակարանային շինարարության ծրագրերի իրականացման միջոցով, որի համար կպահանջվի 25.0 մլրդ. դրամ կամ մեկ ընտանիքի հաշվով՝ 13.8 մլն.դրամ: Ընդ որում, 762 ընտանիքների խնդիրները՝ իրենց կիսակառույց բնակելի տների շինարարական աշխատանքների ավարտմամբ, իսկ անավարտ շինարարության բնակելի տներ չունեցող 1148 (25-100 անօթևան ունեցող համայնքներում բնակվող բազմանդամ ընտանիքներ ու 100-ից ավելի անօթևան ունեցող համայնքներում բնակվող) ընտանիքների բնակարանային խնդիրները՝ նոր բնակելի տների կառուցմամբ:

Սկսած 2010թ. դիտարկվելու է բնակարանային խնդիրների լուծման պետական աջակցության այլընտրանքը, երբ խնդիրները լուծվելու են ոչ միայն ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով, այլ նաև բնակարանային շինարարության ֆինանսավորման նոր մեխանիզմների կիրառմամբ՝ մասնավորապես. նախատեսվում է ստեղծել Հիփոթեքային հիմնադրամ, որը ֆինանսավորելու է բնակարանային շինարարության ծրագրերը պետական պարտատոմսերի թողարկման միջոցով:

2008-2009 թվականների ժամանակահատվածում իրականացվելու են միջոցառումներ ուղղված 2010 թվականից բուն շինարարական աշխատանքների գործընթացը սկսելու ապահովմանը, այդ թվում նոր մոտեցումների մասնավորապես վարկային ծրագրերի :

Բաժին 5. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների իրականացման կազմակերպչական սխեման

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները համակարգվելու են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից: Այդ նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարության կազմում նախատեսվում է ստեղծել անօթևան ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման կենտրոն առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում, որի գործառույթների շրջանակը ներառելու է՝

- երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների մասին միասնական համակարգչային տեղեկատվական համակարգի ստեղծումը.

- հանապատասխան համայնքների ղեկավարների կողմից ներկայացված երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաստատված ցուցակների վերլուծությունների իրականացումը.

- շինարարական ծրագրերի շրջանակներում բազմաբնակարան շենքերի (բնակելի տների) նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և շինարարական աշխատանքների կազմակերպման գործընթացների ապահովման նպատակով սահմնված կարգով կապալառու կազմակերպությունների ընտրության համար անհրաժեշտ փաթեթների նախապատրաստումը:

- պետական միջոցների հաշվին իրականացվող երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման ծրագրերի ընթացքի մոնիտորինգը և վերլուծական տեղեկանքների նախապատրաստումը.

- ինտերնետային էջում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաստատված ցուցակների և բնակարանային խնդիրները կարգավորող օրենսդրական ակտերի տեղադրումը և թարմացումը.

- անհրաժեշտ օրենսդրական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցությունը.

- միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերի և տարեկան ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցությունը.

- մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան ստորաբաժանումներին տեղեկատվական և մեթոդական օժանդակությունը:

Ժամանակի ընթացքում, ստորաբաժանման գործառույթները կարող են ընդլայնվել, մասնավորապես. ներառելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են առանձին սոցիալական խմբերի բնակարանային պայմանների բարելավումը:

Բաժին 6. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի կիրարկումն ապահովող միջոցառումների

Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի կիրարկումն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել միջոցառումներ համաձայն ստորև բերվող ցանկի

Միջոցառումների անվանումը	Կատարման ժամկետը	Հիմնական կատարողները
1.ՀՀ քաղաքաշինության նախարարության կազմում առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում՝ անօթևան ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման կենտրոն ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության ներկայացնելը	2008թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն
2.«Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերահաշվառման վերջնաժամկետ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2008թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն
3.Աղետի գոտու քաղաքային բնակավայրերում անավարտ շինարարության բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի հետազննության աշխատանքների իրականացում և արդյունքներով քաղաքաշինական և տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից ավարտման ենթակա շենքերի վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարությանը ներկայացնելը	2008թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարության
4. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N317 որոշման 1-ին կետով հաստատված կարգի դրույթներին համաձայն Գյումրի քաղաքաքի վարչական սահմաններում ոչ հիմնական շինություններով զբաղեցրած տարածքների սխեմաների կազմում	2008թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ Շիրակի մարզպետարան Գյումրու քաղաքապետարան (համաձայնությամբ)

5.Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակապահովման առաջնահերթության կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2008թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ Շիրակի մարզպետարան ՀՀ Լոռու մարզպետարան
6.Բնակարանային շինարարության ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմների վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը	2008թ, սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ Կենտրոնական Բանկ ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն
7.Անօթևան ընտանիքների հաշվառման միասնական համակարգչային տեղեկատվա-կան համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2008թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ Կենտրոնական Բանկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
8.Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար նոր շինարարական տեխնոլոգիաների կիրառմամբ բնակելի տների կառուցման վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարության ներկայացնելը	2008թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ Շինարարների միություն (համաձայնությամբ) ՀՀ Ճարտարապետների միություն (համաձայնությամբ)
9.«Պետական միջոցների հաշվին իրականացվող երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման ծրագրերի ընթացքի մոնիտորինգի անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2008թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն
10.«Գյումրի քաղաքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցապատման համար առանձնացված տարածքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության ներկայացնելը	2008թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ Շիրակի մարզպետարան Գյումրու քաղաքապետարան (համաձայնությամբ)
11. Աղետի գոտու բնակավայրերում երկրա-շարժի հետևանքով անօթևան մնացած միայ-նակ մեծահասակների բնակարանային խնդրի լուծման համար սոցիալական բնակելի տների կառուցման վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարության ներկայացնելը	2008թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն
12.Նվազագույն ստանդարտներին համապա-տասխանող անհատական բնակելի տների տիպարային նախագծերի մշակում	2009թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարության
13.«Աղետի գոտու գյուղական բնակավայրերում պետական աջակցության տարեկան ծրագրերում ընդգրկվող համայնքների ընտրության չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության ներկայացնելը	2008թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ Շիրակի մարզպետարան ՀՀ Լոռու մարզպետարան

Աղյուսակ N1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2001-2007թթ. ընթացքում աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման վերաբերյալ

	Համալիր ծրագիր - ընդամենը (ընտանիք)	Կատարված է 2001-2007թթ.. ընթացքում- ընդամենը (ընտանիք)	այդ թվում ըստ ֆինանսավորման աղբյուրների՝					
			պետական միջոցներ	ԱՄՆ կառավարություն (USAID)	«Լինսի» հիմնադրամ	«Հայաստան» համահայկական հիմնադրամ	ՏՈՒ և կարեն Հանցմանի հիմնադրամ	համայնքային միջոցներ
Ի.Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրով երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների նկատմամբ բնակապահովման ձևավորված պարտավորություններ՝ (քաղաքային բնակավայրերում) - ընդ.	14920	12041	1557	6079	4126	28	64	251
որոնցից՝ 1.Բազմաբնակարան շենքերում բնակարան կորցրած ընտանիքներ-ընդ.	14598	11894	1557	5932	4126	28	64	251
այդ թվում ըստ ուղղությունների՝ -բնակարանների գնում (այդ թվում ընտանիքի մի մասի կողմից նախկինում զբաղեցրած բնակարանի չափից ոչ պակաս ստացած հերթագրված ընտանիքներին աջակցություն	7826	6720	806	5914	0	0		
-բնակելի տների վերականգնում	2940	2777	552	0	2221	4		
-բնակարանների վերականգնում	174	18	0	18	0	0		
-ոչ աղետի հետևանքով տնակում բնակվող մշտական բնակության վայր չունեցող ընտանիքներին աջակցություն	1220	251	0	0	0	0		251
-բնակելի տների շինարարության ուղղակի ֆինանսավորում (անավարտ և նոր շինարարություն)	2438	2128	199	0	1905	24	64	
2.Անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած ընտանիքներ (ք.Սպիտակ)	322	147	0	147	0	0	0	
Բացի այդ՝								

II. Գյուղական բնակավայրերում (ծրագրով նախատեսվում էր անդրադառնալ 2003 թվականից հետո)- ընդ.		983	466	517				
-ՀՀ Լոռու մարզ		826	354	472				
-ՀՀ Շիրակի մարզ		157	112	45				
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը (I+II)	14920	13024	2023	6596	4126	28	64	251

Աղյուսակ N2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Շիրակի, Լոռու, Արագածոտնի և Տավուշի մարզերի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերաբերյալ

(համապատասխան համայնքների ղեկավարների կողմից 01.03.08թ. դրությամբ հաստատված ցուցակների համաձայն)

	Ընդամենը	այդ թվում՝	
		բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած ընտանիքներ	անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած ընտանիքներ
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	7695	4794	2901
այդ թվում՝ -քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ) բնակավայրեր	5366	4794	572
- գյուղական բնակավայրեր	2329		2329
ընդհանուրից ըստ մարզերի՝			
1. ՀՀ Շիրակի մարզ- ընդամենը	4558	4170	388
այդ թվում՝ -քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ) բնակավայրեր	4170	4170	
- գյուղական բնակավայրեր	388		388
ՀՀ Շիրակի մարզի ընդհանուրից՝ - ք.Գյումրի -ընդամենը	4002	4002	
որոնցից՝ *-փոխհատուցում չստացած*	2961	2961	
- մասնակի փոխհատուցում ստացած	87	87	
- նախկինում զբաղեցրած բնակարանի չափից ոչ պակաս չափով բնակարան ստացած	138	138	
- հանրապետությունից բացակայող	341	341	

-կոոպերատիվ բնակֆոնդում բնակարան կորցրած	*376*	*376*	
-դատարանի վճիռների հիման վրա հաշվառված	*99*	*99*	
-ք.Մարալիկ	3	3	
- գ.Ախուրյան	165	165	
-գյուղական բնակավայրեր - ընդ.	388		388

Աղյուսակ N 2 շարունակություն

	Ընդամենը	այդ թվում՝	
		բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած ընտանիքներ	անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած ընտանիքներ
2. ՀՀ Լոռու մարզ- ընդամենը	2970	546	2424
այդ թվում՝ -քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ) բնակավայրեր	1113	546	567
- գյուղական բնակավայրեր	1857		1857
ՀՀ Լոռու մարզի ընդհանուրից՝ - ք.Սպիտակ- ընդ.	921	354	567
որոնցից՝			
-կոոպերատիվ բնակֆոնդում բնակարան կորցրած ընտանիքներ	8	8	
-դատարանի վճիռների հիման վրա հաշվառված ընտանիքներ	35	35	
-ք. Վանաձոր -ընդ.	113	113	
որոնցից՝ *-հանրապետությունից բացակայող ընտանիքներ*	*75*	*75*	
-ք. Ստեփանավան	59	59	
- գ.Գուգարք	20	20	
-գյուղական բնակավայրեր	1857		1857
3. ՀՀ Արագածոտնի մարզ -	149	65	84
այդ թվում -քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ)բնակավայրեր՝ գ.Ծաղկահովիտ	65	65	
-գյուղական բնակավայրեր	84		84

4.ՀՀ Տավուշի մարզ- ք.Դիլիջան	18	13	5

Աղյուսակ N3

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Շիրակի, Լոռու, Արագածոտնի և Տավուշի մարզերի բնակավայրերում առաջնահերթ կարգով բնակարանային խնդիրների լուծման ենթակա երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերաբերյալ

	Ընդամենը	այդ թվում՝	
		բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած ընտանիքներ	անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած ընտանիքներ
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	6985	4656	2329
այդ թվում՝ -քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ) բնակավայրեր	4656	4656	
- գյուղական բնակավայրեր	2329		2329
ընդհանուրից ըստ մարզերի՝			
1.ՀՀ Շիրակի մարզ- ընդամենը	4420	4032	388
այդ թվում՝ -քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ) բնակավայրեր	4032	4032	
- գյուղական բնակավայրեր	388		388
ՀՀ Շիրակի մարզի ընդհանուրից՝ -ք.Գյումրի	3864	3864	
որոնցից *ա)պետական բնակֆոնդում բնակարան կորցրած ընտանիքներ-ընդ.*	*3389*	*3389*	
-փոխհատուցում չստացած ընտանիքներ	2961	2961	

- մասնակի փոխհատուցում ստացած	87	87	
- հանրապետությունից բացակայող ընտանիքներ	341	341	
բ)կոոպերատիվ բնակֆոնդում բնակարան կորցրած ընտանիքներ	*376*	*376*	
գ)դատարանի վճիռների հիման վրա հաշվառված ընտանիքներ	*99*	*99*	
-ք.Մարալիկ	3	3	
-գ.Ախուրյան	165	165	
-գյուղական բնակավայրեր	388		388

Աղյուսակ N3 շարունակություն

	Ընդամենը	այդ թվում՝	
		բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած ընտանիքներ	անհատական բնա-կարանային ֆոնդում բնակելի տուն կորց-րած ընտանիքներ
2.ՀՀ Լոռու մարզ- ընդամենը	2403	546	1857
այդ թվում՝ -քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ) բնակավայրեր	546	546	
- գյուղական բնակավայրեր	1857		1857
ՀՀ Լոռու մարզի ընդհանուրից՝ - ք.Սպիտակ	354	354	
որոնցից՝ *ա)պետական բնակֆոնդում բնակարան կորցրած ընտանիքներ*	*311*	*311*	
բ)կոոպերատիվ բնակֆոնդում բնակարան կորցրած ընտանիքներ	*8*	*8*	
գ)դատարանի վճիռների հիման վրա հաշվառված ընտանիքներ	*35*	*35*	
-ք. Վանաձոր	113	113	
-ք. Ստեփանավան	59	59	
- գ.Գուգարք	20	20	
-Գյուղական բնակավայրեր	1857		1857
3.ՀՀ Արագածոտնի մարզ - ընդ.	149	65	84
այդ թվում՝ -քաղաքային (այդ թվում նախկին տարածաշրջանների քաղաքատիպ)բնակավայրեր՝ գ.Ծաղկահովիտ	65	65	
-գյուղական բնակավայրեր	84		84

4.ՀՀ Տավուշի մարզ- ք.Դիլիջան	13	13	